### Ի՞ՆՉ ԵՔ ՄՏԱԾՈՒՄ

Իմ ծնողները չեն կնքվել տաճարում: Արդյո՞ք դա նշանակում է, որ ես չեմ կարող լինել հավերժական ընտանիքի մի մաս:
—Նամակ անծանոթին

## Հարգելի՛ անծանոթ,

Դուք երկնային ծնողների սիրելի զավակն եք: Նույնիսկ նախքան այս երկիր գալը, դուք եղել եք Նրանց ընտանիքի անդամը: Եվ դա երբեք չի փոխվի: Ուստի, անկախ ամեն բանից, դուք միշտ կլինեք հավերժական ընտանիքի մի մաս:

Երկնային Հայրը շատ է սիրում ձեզ և ձեր ծնողներին: Նա ցանկանում է, որ դուք բոլորդ վերադառնաք Իր մոտ: Նա կշարունակի օրհնել և առաջնորդել ձեզ և ձեր ընտանիքին: Աղոթեք և պատմեք Նրան ձեր մտահոգությունների մասին, և Նա կմխիթարի ձեզ:

Սիրով՝

*Ընկեր* ամսագիր

**Նկարեք ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամի և որևէ բան, ինչը ձեզ դուր է գալիս նրանց մեջ: Փնտրեք լավ բաներ ձեր ընտանիքում: Նրանց պատմեք, թե ինչ եք տեսնում:**

**Իմ ընտանիքը և ես**

Ձեր ընտանիքն ավելին է, քան դուք և ձեր ծնողները: Ձեր ընտանիքը ձեր տատիկներն ու պապիկներն են, զարմիկները և բոլոր նրանք, ովքեր եկել են նրանցից առաջ: Մի օր ձեր ընտանիքը կարող է ներառել ձեր ամուսնուն և ձեր երեխաներին: Դա մի մեծ ընտանիք է: